*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ*
*ՊԱՏԳԱՄԱՎՈՐ*

Երևան, Բաղրամյան 19
Հեռ 011-513-288 2020 թվական, 9 ապրիլի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Միրզոյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածների՝ որպես օրենսդրական նախաձեռնություն, Ձեզ ենք ներկայացնում <<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> և <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> օրենքների նախագծերի փաթեթը:

Կից ներկայացվում են նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորումը, գործող օրենքների փոփոխվող հոդվածների և այլ իրավական ակտերում փոփոխության անհրաժեշտության մասին տեղեկանքները:

Խնդրում ենք նշված օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Նախագծի հիմնական զեկուցող՝ ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ՝ ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետև Օրենք) 1-ին հոդվածը 18-րդ կետից հետո լրացնել 19-րդ և 20-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«19. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլաններ՝ տարբեր արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեությունը նկարագրող փաստաթուղթ:

«20. Արտակարգ իրավիճակով պայմանավորված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգ՝ անկախ կազմակերպաիրավական ձևից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջներ և միջոցառումներ՝ ուղղված մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող հնարավոր հետևանքների կանխարգելմանը, նվազեցմանը և վերացմանը»:

**Հոդված 2.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4 .1-ին գլխով.

## «ԳԼՈՒԽ 4.1 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

**Հոդված 24.1** Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլաններ

1. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները սահմանում են համապատասխան արտակարգ իրավիճակում առողջապահության բնագավառի գործունեության հիմնական սկզբունքները, հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման կարգը, արտակարգ իրավիճակի հետևանքների, կանխարգելման, նվազեցման և վերացման համար անհրաժեշտ ռեսուրսների, մարդկային ներուժի, սարքավորումների, դեղերի և այլ ապրանքների պահանջարկը, դրանց համալրման կարգը, առողջապահության և արտակարգ իրավիճակների բնագավառներում լիազոր մարմինների, տարածքային կառավարման մարմինների, տեղական

ինքնակառավարման մարմինների, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների և ոստիկանության կողմից կատարման ենթակա միջոցառումները:

2. Առողջապահության և արտակարգ իրավիճակների բնագավառներում լիազոր մարմինների կողմից համատեղ մշակված արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները հաստատում է կառավարությունը:»:

3. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ կառավարության կողմից, առողջապահության և արտակարգ իրավիճակների բնագավառներում լիազոր մարմինների նախաձեռնությամբ:

Հոդված 24.2 Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման կարգը

1. Արտակարգ իրավիճակներում արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլաններից բխող համապատասխան արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման կարգը հաստատվում է կառավարությունը, արտակարգ իրավիճակ հայտարարելուց ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, առողջապահության բնագավառի լիազոր մարմնի ներկայացմամբ:

2. Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման միջոցառումների ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսված բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում և օրենքում չարգելված այլ աղբյուրներից:»

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-265 օրենքի (այսուհետև Օրենք) 10-րդ հոդվածի երկրորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, նվազագույն քանակը, ապահովման, բաշխման, թարմացման ու փոխարինման կարգը հաստատում է կառավարությունը:»:

**Հոդված 2.** Օրենքի 12-րդ հոդվածի «ը.» կետից հետո լրացնել «թ.» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ) Հայտարարում է արտակարգ իրավիճակ, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ՝ բնակչության պաշտպանության կազմակերպման ուղղությամբ:»:

**Հոդված 3.** Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) «դ.» կետից հետո լրացնել «ե.» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե)ապահովում են համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով՝ կառուցվածքային և առանձնացված (տարածքային) ստորաբաժանումների աշխատակիցներին:»:

**Հոդված 4.** Օրենքի 15-րդ հոդվածի «ը.» կետից հետո լրացնել «թ.» կետով հետևյալ բովանդակությամբ.

«թ) ապահովում է համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով՝ մարզպետարանի աշխատակիցներին:»:

**Հոդված 5.** Օրենքի 16-րդ հոդվածի «զ.» կետից հետո լրացնել «է.» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«է) ապահովում է համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով՝ համայնքի աշխատակազմի աշխատակիցներին:»:

**Հոդված 6.** Օրենքի 17-րդ հոդվածի «ա.» կետի «պաշտպանությունը» բառից հետո լրացնել «և համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը:»:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունումը բխում է տարբեր արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի արդյունավետ և միասնական արձագանքը, այդ թվում բնակչության բժշկական օգնության և սպասարկման, արտակարգ իրավիճակներին դիմագրավելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների պահանջարկը, ինչպես նաև միջգերատեսչական, տարածքային և ՏԻՄ մարմինների հետ համագործակցության սկզբունքները պլանավորելու, պարբերաբար թարմացնելու և իրավական ակտով սահմանված ունենալու անհրաժեշտությամբ: Կարևոր է նաև անհատական պաշտպանության միջոցների ձեռքբերումը, բաշխումը, թարմացումը կանոնակարգելու և դրանց իրականացման պատասխանատուներին հստակ սահմանելու անհրաժեշտությունը:

**2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

Գործնականում ցանկացած արտակարգ իրավիճակ էական վտանգ է ներկայացնում բնակչության կյանքի և առողջության համար: Դեռ ավելին, հաճախ արտակարգ իրավիճակն անդրադառնում է բնակչության բժշկական օգնության և սպասարկման բնականոն ընթացքի վրա, էլ ավելի խորացնելով հնարավոր վտանգները: Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը[1] կարևորում է արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու և հակազդելու պլանների առկայությունը, քանի որ դրանք բարձրացնում են պետության արձագանքի արդյունավետությունը՝ ապահովելով միասնական պատասխան արտակարգ իրավիճակից բխող մարտահրավերներին: Ներկա օրենսդրական

---
[1] https://www.who.int/environmental_health_emergencies/preparedness/en/

կարգավորումները չեն պարունակում արտակարգ իրավիճակներին դիմագրավելու պլանների ունենալու պահանջ, ինչն կարող է անդրադառնալ արտակարգ իրավիճակում որոշումների կայացման արդյունավետության վրա:

Միևնույն ժամանակ, արտակարգ իրավիճակներում, օրինակ՝ տարերային աղետների, համավարակների և համաճարակների դեպքում անհրաժեշտ է լինում վերակազմակերպել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման կարգը, սահմանելով բժշկական օգնություն և սպասարկողների միջև փոխգործակցության, համագործակցության, համակարգման նոր մոտեցումներ՝ արտակարգ իրավիճակին դիմագրավելու, այնպես էլ բնակչության բուժօգնության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով: Հետևաբար, նման լիազորության սահմանումն էապես կնպաստի արտակարգ իրավիճակում բնակչության առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման ամբողջականությանը և համակարգվածությանը:

Միևնույն ժամանակ, ընթացիկ իրադարձությունների նախնական վերլուծությունը վկայում է, որ լրացուցիչ կանոնակարգման կարիք ունի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման գործընթացը՝ հստակ սահմանելով այդ աշխատանքների կազմակերպման կարգը և պատասխանատուներին:

**3. Կարգավորման նպատակը և բնույթը.**

Արտակարգ իրավիճակներին նախապատրաստությունը ներառում է հետևողական աշխատանքների շղթա, որոնց նպատակն է ուժեղացնել երկրի ընդհանուր կարողությունները բոլոր տեսակի արտակարգ իրավիճակներից առաջացող առողջապահական ռիսկերը կառավարելու ուղղությամբ, դրանց բացասական հետևանքները նվազեցնելու և բնականոն զարգացմանը վերադառնալու նպատակով:

Վերոնշյալը փաստում է, տարբեր արտակարգ իրավիճակներում աշխատանքները կազմակերպելու պլանների, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման համապատասխան կարգեր սահմանելու օրենսդրական պահանջի անհրաժեշտության մասին: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ կատարելու մասին ՀՀ

օրենքի նախագծի ընդունմամբ առաջարկվում է ներդնել արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի միասնական արձագանքի կենսունակ մեխանիզմներ ունենալու անհրաժեշտության պահանջ, որն ուղղված է արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական օգնության և սպասարկման անընդհատության, շարունակականության ու հասանելիության ապահովմանը:

**4. Ակնկալվող արդյունքը.**

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է ստեղծել արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանավորման միասնական և արդյունավետ համակարգ, որը էապես կնպաստի արտակարգ իրավիճակների արդյունքում առաջացող առողջապահական ռիսկերի առավել օգտավետ կառավարմանը:

## ՏԵՂԵԿԱՆՔ
## «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ կառաջանա կառավարության որոշումների ընդունման անհրաժեշտություն:

## ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

### Հոդված 1. Հիմնական հասկացություններ

1. Բժշկական օգնություն և սպասարկում՝ բնակչությանը խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, հարբժշկական և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցում:

2. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակ կամ տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից, իրավական վիճակից և սեփականության ձևից, կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ:

3. Առողջապահական պետական նպատակային ծրագրեր՝ ամենամյա ծրագրեր, որոնք ուղղված են բնակչության առողջության պահպանմանը և որոնց ֆինանսավորումն արտահայտված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում:

Առողջապահության պետական նպատակային ամենամյա ծրագիրը պետական բյուջեի նախագծի կազմում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է Ազգային ժողով: Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է առողջապահության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են առողջապահության պետական նպատակային ծրագրերին համապատասխան:

4. Արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում՝ քաղաքացիների կողմից առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ստացված բժշկական ծառայությունների, դեղերի և (կամ) բժշկական պարագաների դիմաց մասնակի փոխհատուցում պետական բյուջեի միջոցների հաշվին:

5. Առողջապահության բնագավառ՝ ոլորտ, որտեղ իրականացվում է մարդու և հանրության առողջության պահպանմանը, ապահովմանն ու բարելավմանն ուղղված գործունեություն:

6. Բուժաշխատող՝ առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնող, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում նաև մասնագիտական գործունեություն իրականացնող ու դրա համար համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում, մասնագիտացում և նախատեսված շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր ունեցող, ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ:

7. Պացիենտ՝ բժշկական օգնության և սպասարկման սուբյեկտ հանդիսացող ֆիզիկական անձ:

8. Առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն՝ բուժաշխատողի կողմից իր կրթությանը, որակավորմանը և մասնագիտական բնութագրին համապատասխան, իր իրավասության շրջանակներում, Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ իրավական ակտերին, չափորոշիչներին, կլինիկական ուղեցույցներին, պացիենտի վարման գործելակարգերին և իր աշխատանքային պարտականություններին համապատասխան աշխատանքների իրականացում:

9. Կլինիկական ուղեցույց՝ բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպությունների կամ առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների մշակած և բուժաշխատողների համար նախատեսված փաստաթուղթ, որը ներառում է որոշակի հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման ժամանակակից բժշկագիտության լավագույն փորձը և բավարարում է առողջության հետ կապված կոնկրետ խնդիր ունեցող պացիենտների կարիքները, որի նպատակն է աջակցել բուժաշխատողների կողմից կլինիկական կոնկրետ դեպքի համար որոշումներ կայացվելուն:

10. Պացիենտի վարման գործելակարգ՝ բուժաշխատողի կողմից հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարմանը՝ խորհրդատվությանը, ախտորոշմանը, բուժմանը ներկայացվող պարտադիր պահանջներ:

11. Գործունեության ընթացակարգ՝ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացը նկարագրող փաստաթուղթ:

12. Մասնագիտական բնութագիր՝ առողջապահության բնագավառի բժշկական և ոչ բժշկական, ինչպես նաև նեղ մասնագիտություններից յուրաքանչյուրի ընդհանուր նկարագիրը, մասնագետի տեսական և գործնական գիտելիքների, աշխատանքային հմտությունների և ունակությունների,

ինչպես նաև մասնագիտական իրավունքների, պարտականությունների և գործառույթների ծավալը սահմանող փաստաթուղթ:

13. Բժշկական փաստաթուղթ՝ բուժաշխատողի կողմից վարվող (լրացվող) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ձևի հաշվետվական կամ հաշվառման թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթ, որը ներառում է պացիենտի առողջության, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, դրան համաձայնություն տալու կամ դրանից հրաժարվելու, ինչպես նաև պացիենտի առողջության պահպանման կամ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ անհրաժեշտ բժշկական և ոչ բժշկական բնույթի տվյալներ:

14. Շարունակական մասնագիտական զարգացում՝ առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց մասնագիտական կարողությունների, ունակությունների և հմտությունների զարգացման անընդհատությունն ապահովող գործընթաց:

15. Շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր (այսուհետ՝ ՇՄԶ հավաստագիր)՝ բուժաշխատողի ինքնուրույն մասնագիտական գործունեությունը շարունակելու թույլտվություն, որը տրվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ (այսուհետ՝ ՇՄԶ կրեդիտներ) հավաքելու և վերջին հինգ տարիների ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում:

16. Վերապահումով հավաստագիր՝ բուժաշխատողի ոչ ինքնուրույն, հսկողության ներքո մասնագիտական գործունեություն իրականացնելու թույլտվություն, որը տրվում է չբավարարող աշխատանքային մասնագիտական ստաժը լրացնելու կամ չբավարարող շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտները լրացնելու կամ համապատասխան հաստատությունն ավարտելուց հետո սահմանված ժամանակահատվածում մասնագիտական գործունեություն չիրականացնելու դեպքում աշխատանքային ստաժը լրացնելու պայմանով:

17. Հավաստագրում՝ շարունակական մասնագիտական զարգացման արդյունքների գնահատման և ՇՄԶ հավաստագրի տրամադրման (մերժման) ընթացակարգ:

18. Աշխատանքային տեղում մասնագիտական կատարելագործում՝ բուժաշխատողի կողմից այլ բժշկական կազմակերպությունում կամ բուժաշխատողի աշխատանքային վայր հանդիսացող բժշկական կազմակերպությունում այլ բժշկական կազմակերպություններից հրավիրված մասնագետների մասնակցությամբ նոր գործնական գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու գործընթաց:

19. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլաններ՝ տարբեր արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեությունը նկարագրող փաստաթուղթ:

20. Արտակարգ իրավիճակով պայմանավորված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգ՝ անկախ կազմակերպաիրավական ձևից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջներ և միջոցառումներ՝ ուղղված մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող հնարավոր հետևանքների կանխարգելմանը, նվազեցմանը և վերացմանը:

## ԳԼՈՒԽ 4.1 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

**Հոդված 24.1** Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման պլանները

1. Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման պլանները սահմանում են համապատասխան արտակարգ իրավիճակում առողջապահության բնագավառի գործունեության հիմնական սկզբունքները, հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման կարգը, արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման և վերացման համար անհրաժեշտ ռեսուրսների, մարդկային ներուժի, սարքավորումների, դեղերի և այլ ապրանքների պահանջարկը, դրանց համալրման կարգը, առողջապահության և արտակարգ իրավիճակների բնագավառներում լիազոր մարմինների, տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից իրականացման ենթակա միջոցառումները:

2. Առողջապահության և արտակարգ իրավիճակների բնագավառներում լիազոր մարմինների կողմից համատեղ մշակված արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման պլանները հաստատում է կառավարությունը:»:

3. Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման պլանները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ կառավարության կողմից, առողջապահության և արտակարգ իրավիճակների բնագավառներում լիազոր մարմինների նախաձեռնությամբ:

Հոդված 24.2 Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման կարգը

1. Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման պլաններից բխող համապատասխան արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման կարգը հաստատվում է կառավարությունը, արտակարգ իրավիճակ հայտարարելուց ոչ ուշ քան 48 ժամվա ընթացքում, առողջապահության բնագավառի լիազոր մարմնի ներկայացմամբ:

2. Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության և սպասարկման միջոցառումների ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսված բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում:»

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Հոդված 10. Բնակչության անհատական պաշտպանությունը**

Բնակչության անհատական պաշտպանությունը մարդկանց շնչառական օրգանները և մաշկը պաշտպանում է թունավոր գոլորշիների կաթիլներից, աերոզոլների ներգործությունից, ճառագայթային փոշիներից, ախտահարույց մանրէներից և թունավոր նյութերի ազդեցությունից:

Անհատական պաշտպանության միջոցներով ապահովումն իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները:

Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, նվազագույն քանակը, ապահովման, բաշխման, թարմացման ու փոխարինման կարգը հաստատում է կառավարությունը:

**Հոդված 12. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ղեկավարում է բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

բ) հաստատում է արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման ու վերացման, բնակչության պաշտպանության ծրագրերը և վերահսկում դրանց կատարումը.

գ) սահմանում է արտակարգ իրավիճակների առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների ու գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննություն իրականացնելու կարգը.

դ) ապահովում է բնակչությանն ազդարարումը և տեղեկատվությունն արտակարգ իրավիճակներում.

ե) հայտարարում է աղետի գոտի և սահմանում դրա տարածքը, ինչպես նաև կազմակերպում է այդ տարածքին առավելագույն օգնություն և նյութական պաշարներ տրամադրելու աշխատանքները.

զ) հաստատում է արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կարգը.

է) իրականացնում է բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ օրենքներով սահմանված այլ լիազորություններ.

ը) հաստատում է լիազորված մարմնի ներկայացրած արտակարգ իրավիճակներում տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ու դրանց օգտագործման կարգը:

թ) Հայտարարում է արտակարգ իրավիճակի մասին, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ՝ բնակչության պաշտպանության կազմակերպման ուղղությամբ: Արտակարգ իրավիճակի ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն կարող սահմանափակվել, եթե սահմանված չէ արտակարգ իրավիճակից բխող արտակարգ դրության իրավական ռեժիմ:

***(12-րդ հոդվածը փոփ., լրաց. 05.03.02 ՀՕ-310, փոփ. 21.01.20 ՀՕ-35-Ն)***

**Հոդված 14. Պետական կառավարման համակարգի մարմինների իրավասությունը**

***(վերնագիրը փոփ. 21.01.20 ՀՕ-35-Ն)***

Պետական կառավարման համակարգի մարմինները՝

ա) կազմակերպում են իրենց համակարգի աշխատողների պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

բ) կազմակերպում են ենթակա ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունն արտակարգ իրավիճակներում.

գ) իրենց լիազորությունների սահմաններում ապահովում են բնակչության պաշտպանությունը և այդ նպատակով ստեղծում են անհրաժեշտ մասնագիտացված կազմավորումներ.

դ) իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ օրենքով սահմանված այլ լիազորություններ:

ե) ապահովում են համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով Կառուցվածքային և առանձնացված (տարածքային) ստորաբաժանումների աշխատակիցներին:

***(14-րդ հոդվածը լրաց. 05.03.02 ՀՕ-310, փոփ. 21.01.20 ՀՕ-35-Ն)***

**Հոդված 15. Պետական կառավարման տարածքային մարմինների իրավասությունը**

Պետական կառավարման տարածքային մարմինները՝

ա) կազմակերպում են մարզի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

բ) կազմակերպում են մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերի մշակումը և համակարգում այդ ծրագրերում նախատեսված աշխատանքները.

գ) մասնակցում են պետական համապատասխան ծրագրերով նախատեսված՝ արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը.

դ) տեղական ինքնակառավարման մարմիններին և բնակչությանը ներգրավում են արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

ե) ոստիկանության և ազգային անվտանգության հարցերով լիազորված պետական կառավարման մարմնի տարածքային ծառայություններին տալիս են հանձնարարականներ՝ բնակչության պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային հատուկ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ.

զ) պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ծառայություններին տալիս են հանձնարարականներ՝ արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության վերաբերյալ.

է) պատասխանատու են մարզի տարածքում բնակչության պաշտպանությունն ապահովելու համար.

ը) իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ օրենքով սահմանված այլ լիազորություններ:

թ) ապահովում է համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով՝ մարզպետարանի աշխատակիցներին:

***(15-րդ հոդվածը փոփ. 21.01.20 ՀՕ-35-Ն)***

**Հոդված 16. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը**

Տեղական ինքնակառավարման մարմինները՝

ա) կազմակերպում են համայնքի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

բ) իրականացնում են վթարային և վերականգնողական միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակներում համայնքային ենթակայության կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու համար.

գ) կազմակերպում են փրկարարական աշխատանքներ համայնքի տարածքում.

դ) իրականացնում են արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ համայնքի տարածքում.

ե) իրականացնում են համայնքի բնակչության ազդարարումն արտակարգ իրավիճակներում.

զ) իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ օրենքով սահմանված այլ լիազորություններ:

է) ապահովում է համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով համայնքի աշխատակազմի աշխատակիցներին:

***(16-րդ հոդվածը փոփ. 21.01.20 ՀՕ-35-Ն)***

**Հոդված 17. Ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների իրավասությունը**

Ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպություններն արտակարգ իրավիճակներում՝

ա) իրականացնում են իրենց աշխատողների պաշտպանությունը և համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը.

բ) աջակցում են փրկարարական և անհետաձգելի աշխատանքների իրականացմանը և ստեղծում են անհրաժեշտ ուժեր՝ համապատասխան աշխատանքներ կատարելու համար:

Հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտներն ապահովում են հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության անհապաղ ազդարարումը և պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

***(17-րդ հոդվածը լրաց. 05.03.02 ՀՕ-310, լրաց. 08.12.05 ՀՕ-7-Ն)***